

14-16-ը 1996-2009 թթ. ղեկավարում էր Երեւանի Գ.Սունդուկյանի անվան պետական ազգային ակադեմիական դրամատիկ թատրոնը: խմբ.):

- 1964 թվականն էր, երբ աբեյանցիներն առաջին անգամ եկան Թբիլիսի հյուրախաղերի: Ես շատ լավ հիշում եմ. դպրոցը դեռ չէի ավարտել. ծնողներիս խնդրեցի, որ խմբի հետ մեկնեմ, եւ նրանք ինձ ժիրայր Կարապետյանին վստահեցին, նա այն ժամանակ Կիրովականի թատրոնի դերասան էր: (Ժ.Կարապետյանը արդեն 45 տարի է ադամյանցիների առաջատար ու վաստակաշատ դերասաններից է: խմբ.): Այդպես ես առաջին անգամ եղա այստեղ: Փաստորեն, այս տարի այդ բարեկամության 50-ամյակն է: Հետո հաջորդեցին պատասխան հյուրախաղերը: Եվ արդեն պարբերաբար, 2-3 տարին մեկ, պարտադիր գալիս էինք, եւ իմ լավագույն բեմադրությունները մշտապես ներկայացվել են այստեղ: Ի դեպ, Հայաստանի եւ ոչ մի թատրոն այսքան երկարատեւ բարեկամություն չի ունեցել Թբիլիսիի հետ: Ամենաշատ հյուրախաղերով հենց մենք ենք ներկայացել:

- Աբեյանցիները թբիլիսյան հանդիսատեսին կներկայանան վերջին շրջանի լավագույն ներկայացումներից երեքով՝ Վիլիամ Շեքսպիրի «Արքա Լիր», Ալեքսանդր Շիրվանզադեի «Չար ոգի», Արմեն Բայանդուրյանի «Աշնանային իրիկնամուտ»: Ներկայացումներում ընդգրկված է Աբեյանի անվան թատրոնի գրեթե ամբողջ կազմը, բոլորն էլ սրտատրոփ սպասում են, մեծ ոգեւորություն է այսօր թատրոնում:

- Ցավոք, մի ընդհանուր բացասական բան կա, ինչպես տեսնում եմ, դրանից զերծ չեն նաեւ թբիլիսյան թատրոնները: Անշուշտ, այսօր հանդիսատեսի պակաս կա: Առաջ եթե մենք ամսվա մեջ 25-26 ներկայացում էինք խաղում եւ գրեթե միշտ լեփ-լեցուն դահլիճներում, ապա հիմա ամսվա մեջ 8-10 ներկայացումը բարձր ցուցանիշ է համարվում: Եվ պատճառն ամենեւին որակը չէ: Խնդիրը սոցիալական է: Որակը չի տուժել, ընդհակառակը, ես կարող եմ վստահորեն ասել, որ այսօր տաղանդավոր երիտասարդներ կան թատրոններում, ովքեր գալիս են մեծ ոգեւորությամբ, սակայն մեկ-երկու տարի անց, հիասթափված հեռանում են: Եթե տարիներ առաջ դերասանը թատրոնից հեռանում էր, որովհետեւ դերեր չէր ունենում, ապա հիմա հեռանում է սոցիալական վիճակից դրդված: Այսօր հանդիսատեսը միշտ չէ, որ կարող է իրեն թույլ տալ նույնիսկ նվազագույն գներով իրացնել վաճառվող տոմսերը:

- Ես դեռ անցած տարի էի մտածում Թբիլիսիում հյուրախաղեր կազմակերպել, քանի որ աբեյանցիները պարբերաբար եղել են հյուրախաղերով այստեղ: Եվ հատկապես այն տարիներին, երբ ես ղեկավարում էի Կանաձորի պետական դրամատիկական թատրոնը: Մենք 6-7 անգամ եղել ենք Թբիլիսիում: (Վ.Շահվերդյանը 1996-2009 թթ. ղեկավարում էր Երեւանի Գ.Սունդուկյանի անվան պետական ազգային ակադեմիական դրամատիկ թատրոնը: խմբ.):

- Նման է ջերմությամբ: Մեր ներկայացումները այստեղ մշտապես ընթացել են շատ էմոցիոնալ մթնոլորտում եւ բուն ծափերով ընդունվել հանդիսատեսի կողմից: Առհասարակ, արեւանցիները շատ սիրված են Թբիլիսում, եւ ամեն ինչ կանենք, որ ներկայիս հյուրախաղերը եւս նորմալ անցնեն, հանդիսատեսը գոհ մնա՝ ինչպես անցյալում: Ի դեպ, երբ ես հյուրախաղերի առաջարկով եկա Գրիբոյեդովի անվան թատրոն, գրիբոյեդովցիները ցանկություն հայտնեցին իրենք եւս հյուրախաղերով հանդես գալ Հայաստանում, եւ հոկտեմբերի 11-12-ին նրանք Երեւանում ներկայացնելու են Լեւ Տոլստոյի «Ձիու պատմությունը»՝ թատրոնի գեղարվեստական ղեկավար Ավթանդիլ Վարսենաշվիլու բեմադրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՄԻՏԵ